

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	4
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ-----	6

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ 12

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 13

3.1 Ծրագրեր և կատարողական -----	13
3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	14
3.3 Միջազգային համագործակցություն -----	14
3.4 Հարկային և մաքսային թվերի համառոտագիր -----	15

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 հոկտեմբերի 2010թ, ՀՕ-149-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (793), 24.11.2010թ.
Ուժի մեջ է	2011 թվականի մարտի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ համախառն եկամտից նվազեցվող եկամուտ են համարվում նաև դրոշմապիտակների

ձեռքբերման համար պետական բյուջե վճարված գումարները՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 հոկտեմբերի 2010թ, ՀՕ-150-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (793), 24.11.2010թ.
Ուժի մեջ է	2011 թվականի մարտի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ապօրինի ձեռքբերված հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) (նախկինում՝ միայն դրոշմանիշներով) դրոշ-

մավորված ապրանքների իրացման դեպքում այդ ապրանքները ենթակա են ոչնչացման հարկային մարմինների կողմից՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:



Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի 2010թ, ՀՕ-151-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (793), 24.11.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ԱԱՀ-ից ազատվում է նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզի-

կական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալում գույքի ներդրումը:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի 2010թ, ՀՕ-152-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (793), 24.11.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ շահութահարկի իմաստով եկամուտ չեն համարվում նաև պետական կամ համայնքային բյուջեներ վճարվող այլ պարտադիր վճարների և տուրքերի, բնօգտագործման վճարների գծով տրվող արտոնությունների գումարները, ինչպես նաև սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները:



Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի 2010թ, ՀՕ-162-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (794), 01.12.2010թ.
Ուժի մեջ է	2010 թվականի դեկտեմբերի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ որպես եկամուտ չհամարվող տարրեր են հա-

մարվում նաև ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստները:

Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	16 նոյեմբերի 2010թ, ՀՕ-165-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 63 (797), 15.12.2010թ.
Ուժի մեջ է	2011 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ համախառն եկամուտը նվա-

զեցվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար 32500 դրամի չափով:

Փաստաթուղթ	«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15 նոյեմբերի 2010թ, ՀՕ-172-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 63 (797), 15.12.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում նաև ձյունագնացը և մոտոամենագնացը (քվադրոցիկը), որոնց

համար գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 150 դրամ դրույքաչափով:



1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Կենդանիների, կենդանական ծագման մթերքի, հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների և սննդամթերքի ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 19-ի N 1228-Ն և 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1901-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	21 հոկտեմբերի 2010թ, N 1442-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (793), 24.11.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է կենդանիների, կենդանական ծագման հումքի, մթերքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների և սննդամթերքի ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման կարգը:

Ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ կառավարության 19.08.04թ. և 09.11.05թ. համապատասխանաբար «Անասնապահական

բեռների միջազգային և միջպետական փոխադրումների ժամանակ անասնաբուժական պետական հսկողության կարգը սահմանելու մասին» N 1228-Ն և «Անասնաբուծության մեջ օգտագործվող տոհմանյութի Հայաստանի Հանրապետություն ներկրման և Հայաստանի Հանրապետությունից արտահանման կարգը հաստատելու մասին» N 1901-Ն որոշումները:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 8-ի N4 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	11 նոյեմբերի 2010թ, N 1460-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (793), 24.11.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ կատարված փոփոխությամբ սահմանվում է միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների տեղափոխման կարգը (նախկինում՝ առանց մաքսատուրք վճարելու միջազգային փոխադրումներով փոխադրվող 20 կգ ընդհանուր քաշը և 50 հազ. դրամի արժեքը չգերազանցող ապրանքների տեղափոխման կարգ):

րելու միջազգային փոխադրումներով փոխադրվող 20 կգ ընդհանուր քաշը և 50 հազ. դրամի արժեքը չգերազանցող ապրանքների տեղափոխման կարգ):

Փաստաթուղթ	«Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների ձևերի տպագրության, հարկային մարմնից հարկային հաշիվների ձեռքբերման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը և հարկային հաշիվների ձևերի գինը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	11 նոյեմբերի 2010թ, N 1504-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 61 (795), 08.12.2010թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում են էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների ձևերի տպագրության և հարկային մարմնից վերջիններիս ձեռքբերման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը:

ության և հարկային մարմնից վերջիններիս ձեռքբերման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	18 նոյեմբերի 2010թ, N 1539-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 61 (795), 10.11.2010թ.
Ուժի մեջ է	2011 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարված փոփոխությամբ որպես պարզևավճար և բոնուս է սահմանվում նաև ավտոմեքենան: Փոփոխվել են նաև յուրաքանչյուր վիճակահանության համար նախատեսված պարզևավճարների հիմնադրամից վիճակահանության արդյունքում շահող կտրոնների համար տրամադրվող պարզևավճարները (հատուկ համարի 1-ին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ բոլոր ութ թվերի համընկման դեպքում՝ մեկ ավտոմեքենա և մեկ միլիոն դրամ և այլն):

Որոշման 12-րդ կետում կատարված փոփոխությամբ հանվել է յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում տրամադրված՝ վիճակահանության արդյունքում չշահած ՀՀ կտրոնների խմբաքանակների համար բոնուս տրամադրելու կարգը. նույն կետում սահմանվել է, որ յուրաքանչյուր վիճակահանության համար որպես պարզևավճար և (կամ) բոնուս տրամադրվում է 10 ավտոմեքենա: Վիճակահանության արդյունքներով շահող կտրոններ ներկայացրած ֆիզիկական անձանց որպես պարզևավճար ավտոմեքենա-

ների տրամադրումից հետո մնացած ավտոմեքենաները՝

- որպես բռնուս տրամադրվում են շահող կտրոնի վրա արտացոլված գործարքի առավելագույն արժեք ունեցող հատուկ համարի 1-ին կամ վերջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ բոլոր վեց թվերի համընկմամբ կտրոններ ներկայացրած ֆիզիկական անձանց,

- վերոնշյալ դեպքում ևս ավտոմեքենաների սահմանված քանակը չսպառվելու դեպքում մնացած ավտոմեքենաները որպես բռնուս տրամադրվում են շահող կտրոնի վրա արտացոլված գործարքի առավելագույն արժեք ունեցող հատուկ համարի առաջին կամ վերջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ բոլոր հինգ թվերի համընկմամբ կտրոններ ներկայացրած ֆիզիկական անձանց,

Որոշմամբ սահմանվում են վիճակահանության արդյունքներով դրամական պարգևավճարներ, ինչպես նաև ավտոմեքենաներ



տրամադրող մարմինները, պարգևավճարների տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը, վերջիններիս ներկայացման և պարգևավճարների տրամադրման ժամկետները:

1.3 Պաշտոնական պարգաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2006 թվականի մարտի 14-ի թիվ 1-05/06-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Աֆրիկյանի հրաման
Ամսաթիվը և համարը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 28 (380), 01.12.2010թ.
Հրապարակումը	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Հրամանով 14.03.06թ. N 1-05/06-Ն հրամանում «անվճարունակություն (սնանկություն)» և «ապահովագրություն» բառերը փոխարինվում են համապատասխանաբար «սնանկություն» և «ապահովություն» բառերով: Նույն հրամանում կատարված մեկ այլ փոփոխությամբ նախատեսվում է հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով պարտավորությունների հաշվառման կարգը նաև անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարեցման դեպքում:



Մեկ այլ փոփոխության համաձայն սահմանվում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչությունը ուսումնասիրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչություններից սահմանված կարգով ստացված դատարանի վճիռները և դրա վերաբերյալ համապատասխան նյութերը և վճռի բողոքարկման հանգամանքների բացակայության դեպքում 5-օրյա (նախկինում՝ 3-օրյա) ժամկետում տեղեկություն է ներկայացնում ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին դիտարկումների և վերահսկողության վարչություն, վերջինս ստացված տեղեկության հիման վրա կազմում և 5-օրյա ժամկե-

տում ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան հարկային (տարածքային) տեսչություն (նախկինում՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՊԾ պետին) է ներկայացնում ցուցում՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը անձնական հաշվի քարտերում համապատասխան գրանցումներ և պարտավորությունների վերջնահաշվարկ կատարելու վերաբերյալ, նշված ցուցման հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունները դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելու օրը հարկ վճարողների անձնական հաշվի քարտերում կատարում են վերջնահաշվարկ:

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59.7-րդ հոդվածի կիրառման մասին» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	08.11.2010թ, N 740-Ն, 02.11.2010թ. N 18
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 28 (380), 01.12.2010թ.

Համառոտ նկարագիր


Պարզաբանմամբ նշվում է, որ այն դեպքերում, երբ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության իրականացման համար հարմարեցված առանձին սարքավորումներ օգտագործվում են երկու և ավելի վայրերում (հասցեներում) տեղադրված, նույն գործունեություն իրականացնելու համար հարմարեցված այլ սարքավորումների հետ, յուրաքանչյուր վայրում ֆիզիկապես տեղադրված՝ գազալիցքավորման համար հարմարեցված սարքավորումները դիտվում են որպես գազալցման (գազալիցքավորման) համար հարմարեցված սարքավորումների ամբողջություն (գազալցման կայան (կետ)):



Փաստաթուղթ	«Հարկային գործակալի կողմից հարկային տեսչության մարմնին ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին ամփոփ հաշվարկի ներկայացման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	29.10.2010թ, N 720-Ն, 05.11.2010թ. N 19
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 28 (380), 01.12.2010թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտին վճարված այն եկամուտները, որոնց վճարումը ՀՀ կառավարության 07.10.2004թ. N 1398-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից գանձվող հարկի դրույքաչափի նվազեցման կամ հարկումից ազատման մասին» սերտիֆիկատ-դիմումի հիման վրա կատարվել է առանց հարկի պահման (գանձման)՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածին (Հարկային գործակալի պահած շահութահարկի գումարների վճարման և հաշվարկների ներկայացման ժամկետները) համապատասխան հարկային գործակալի կողմից ներկայացվող ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին ափոփ հաշվարկում չեն ներառվում: Հարկային գործակալը իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային տեսչության մարմնին ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին



ամփոփ հաշվարկ չի ներկայացնում, եթե տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ոչ ռեզիդենտներին վճարվել են բացառապես այնպիսի եկամուտներ, որոնց վճարումը ՀՀ կառավարության 07.10.2004թ. N 1398-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից գանձվող հարկի դրույքաչափի նվազեցման կամ հարկումից ազատման մասին» սերտիֆիկատ-դիմումի հիման վրա կատարվել է առանց հարկի պահման (գանձման):

Փաստաթուղթ	«Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց անհատույց տրված գումարներից եկամտահարկի հաշվարկման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	08.11.2010թ. N 739-Ն, 10.11.2010թ. N 21
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 28 (380), 01.12.2010թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

1. | Նվազեցվող եկամուտներ են համարվում միայն ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում կոնկրետ ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրվող օգնության գումարները, իսկ եթե այդ գումարները կանոնադրական գործունեության շրջանակներից դուրս են, ապա վերջիններս հարկվում են եկամտահարկով՝ ընդհանուր սահման-

ված կարգով: Եթե հնարավոր չէ իդենտիֆիկացնել ՀՀ-ում օգնություն ստացած ֆիզիկական անձին, ապա ոչ առևտրային կազմակերպությունների կողմից եկամտահարկը հաշվարկվում է վճարված գումարներից 11% դրույքաչափով:

2. | Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից գրեական պիտույքները և գրականությունը կոնկրետ ֆիզիկական անձանց անվճար տրամադրելիս եկամտահարկը հաշվարկվում է ընդհանուր սահմանված

կարգով, իսկ եթե հնարավոր չէ իդենտիֆիկացնել ՀՀ-ում գրեհական պիտույքներ և գրականություն անվճար ստացած ֆիզիկական անձին, ապա ոչ առևտրային կազմակերպությունների կողմից եկամտահարկը հաշվարկվում է վճարված գումարներից 11% դրույքաչափով:

3. | Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից բուկլետներ, քարոզչական թերթիկներ և համանման այլ նյութեր ֆիզիկական անձանց անվճար տրամադրելիս եկամտահարկ չի հաշվարկվում և չի վճարվում: Պարզաբանմամբ նշվում է, որ եթե ռեզիդենտը շահութահարկի հաշվարկների՝ «Շահութահարկի մասին» օրենքով սահմանված ներկայացման ժամկետից ոչ ուշ գրավոր հայտարարություն է ներկայացնում իր հաշվառման վայրի հարկային տեսչություն՝ անորոշ ժամկետով գործունեություն չիրականացնելու մասին, ապա գործու-

նեություն չիրականացնելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելուց հետո կանխավճարների համար վերոնշյալ օրենքով սահմանված առաջիկա վճարման ժամկետից սկսած ռեզիդենտը շահութահարկի կանխավճարների ամսական վճարումներ չի կատարում, եթե նույնիսկ հարկային տեսչության մարմին ներկայացրած գրավոր հայտարարության մեջ չի նշել շահութահարկի կանխավճարներ չկատարելու մասին:

Հարկային տեսչություն գրավոր հայտարարություն ներկայացնելուց հետո գործունեություն չիրականացնելու դեպքում տույժերը հաշվարկվում են վերոնշյալ օրենքով սահմանված կարգով՝ ընթացիկ տարում եկամուտներ չնախատեսելու (գործունեություն չիրականացնելու) մասին գրավոր հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող առաջիկա կանխավճարային մուծման վճարման ժամկետից սկսած:

Փաստաթուղթ	«Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից տեղեկությունները հարկային մարմին ներկայացնելու կարգը և բովանդակությունը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	17.11.2010թ. N 2436-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 29 (381), 15.12.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատված հավելվածով սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հարկային մարմին՝ բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ժամկետները և բովանդակությունը, ինչպես նաև՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման իրավունք ունեցող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ժամկետներն ու բովանդակությունը:



Փաստաթուղթ	«Հաճախորդի բացած բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները առևտրային բանկերի կողմից հարկային մարմիններ կայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	17.11.2010թ. N 2437-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 29 (381), 15.12.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատված հավելվածով սահմանվում է առևտրային բանկերի կողմից հարկային մարմին՝ ՀՀ տարածքում ստեղծված իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններում ստեղծված իրավաբանական անձանց և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների, ՀՀ-ում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների, ՀՀ-

ում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ներկայացման ժամկետները և կարգը: Հարկային մարմինը հրամանով հաստատված կարգի որևէ խախտում հայտնաբերելու կամ այդ կարգի համաձայն տրամադրված տեղեկատվությունը իր մոտ առկա տեղեկությունների հետ համադրման արդյունքում անհամապատասխանություններ կամ այլ անճշտություններ հայտնաբերելու դեպքում դիմում է ՀՀ կենտրոնական բանկ (այլ ոչ առևտրային բանկ):

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի հունիսի 6-ի N 07-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	22.11.2010թ. N 2442-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 29 (381), 15.12.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվում ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 06.06.08թ, «Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը սահմանելու մասին» N 07-Ն հրամանում, որոնցով սահմանվում է, որ գանգատարկման հանձնաժողով ներկայացված դիմում-գանգատները քննության են առնվում վերադաս հարկային մարմին



մուտքագրվելու օրվանից 15-օրյա ժամկետում և դիմում-գանգատը (բացառությամբ վարչական տուգանքի նշանակման հետ կապվածների) մասամբ բավարարելու կամ մերժելու դեպքում գանգատարկման հանձնաժողովի որոշման նախագիծը, դիմում-գանգատը և գանգատին առնչվող նյութերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ որոշմամբ ստեղծված Գանգատարկման խորհրդին:

Գանգատարկման հանձնաժողովը Գանգատարկման խորհրդի եզրակացությունը ստանալուն հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է դիմում-գանգատի վերաբերյալ որոշում, եթե Գանգատարկման հանձնաժողովի կողմից քննարկման ընթացքում այդ եզրակացության վերաբերյալ առարկությունները բացակայում են: Իսկ եթե Գանգատարկման խորհրդի եզրակացության վերաբերյալ առկա են առարկություններ, Գանգատարկման հանձնաժողովը գանգատի փաթեթը առաջարկությունների և հիմնավորումների

հետ միասին ներկայացնում է հարկային մարմնի ղեկավարին՝ սահմանված կարգով ՀՀ վարչապետին ներկայացնելու համար: ՀՀ վարչապետի մոտ գանգատի փաթեթի քննարկման արդյունքներին համապատասխան Գանգատարկման հանձնաժողովը դիմում-գանգատի վերաբերյալ ընդունում է որոշում:

Հրամանում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ գանգատարկման հանձնաժողովի նիստերը հրավիրվում են նախագահի կողմից՝ ըստ անհրաժեշտության:

Հրամանում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ Գանգատարկման հանձնաժողովի նախագահը քվեարկում է վերջում: Հավասար ձայների առկայության դեպքում վերջինիս ձայնը որոշիչ է, և եզրակացությունը համարվում է ընդունված դիմում-գանգատ ներկայացրած անձի օգտին: Գանգատարկման հանձնաժողովի նիստերին այլ անյձանց (այդ թվում՝ ՉԼՄ-ների) մասնակցությունը տեղի է ունենում՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Գանգատարկման հանձնաժողովին:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի «բ» ենթակետի կիրառման մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	17.11.2010թ. N 22
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 29 (381), 15.12.2010թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «բ» ենթակետի դրույթը (մինչև 58.35 միլիոն դրամ հարկվող շրջանառություն ունեցող, բայց տարեկան 100 հազար դրամ և ավելի պետական տուրք վճարող անձանց՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ) կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք իրականացնում են լիցենզավորման ենթակա այնպիսի գործունեության տեսակներ, որոնց համար օրենքով պետական տուրքի տարեկան գումարը կամ լիցենզիայի գործողության մեկ տարվան բաժին ընկնող գումարը սահմանված է կամ կազմում է 100 հազար դրամ կամ ավելի:



2. ՀԱՐԱԿԻՑ (ՏՆՏԵՍԱԿԱՆ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթուղթ	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26.10.2010թ., ՀՕ-148-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (793), 24.11.2010թ.
Ուժի մեջ է	2011 թվականի մարտի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված փոփոխությամբ տուգանք է սահմանվում նաև հսկիչ նշանների (դրոշմապիտակների) օտարման կամ ապօրինի ձեռքբերված հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ապրանքներ դրոշմավորելու, դրոշմավորման ենթակա չդրոշ-

մավորված ապրանքներ իրացնելու, հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման կանոնները խախտելու դեպքում (նախկինում՝ միայն ակցիզային դրոշմանիշների համար):

Փաստաթուղթ	«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի 2010թ., ՀՕ-160-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (794), 01.12.2010թ.
Ուժի մեջ է	2010 թվականի դեկտեմբերի 1-ից

Համառոտ նկարագիր

Հաստատվել է վերոնշյալ օրենքը, որի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվելու «Ժամանակավոր անաշխատուն-

ակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ 24.10.05թ. ՀՕ- 208-Ն օրենքը:

Փաստաթուղթ	«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի 2010թ., ՀՕ-161-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (794), 01.12.2010թ.
Ուժի մեջ է	2010 թվականի դեկտեմբերի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ սոցիալական վճարումներ պարտավոր են կատարել նաև օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկը, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը օտարերկրյա

քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Օրենքի 6-րդ հոդվածում (Սոցիալական վճարների հաշվարկման և վճարման կարգը) կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ գործատուները յուրաքանչյուր

ամիս հաշվարկված սոցիալական վճարների հաշվին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով հաշվարկում և վճարում են վարձու աշխատողի մահվան դեպքում

տրվող թաղման նպաստը և ժամանակավոր անաշխատունակության նպաստները՝ մնացած գումարները փոխանցելով պետական բյուջե մինչև հաջորդ ամսվա 20-ը:

Փաստաթուղթ	«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատրելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	16 նոյեմբերի 2010թ, ՀՕ-164-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 63 (797), 15.12.2010թ.
Ուժի մեջ է	2011թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվում է 32500 դրամ: Գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը 2-րդ աշխատաժամանակի նորմալ տևողության դեպքում

(40-ժամյա աշխատանքային շաբաթ) սահմանվում է 196 դրամ, աշխատաժամանակի կրճատ տևողության դեպքում (36-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 218 դրամ, աշխատաժամանակի կրճատ տևողության դեպքում (24-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 326 դրամ:

3. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

3.1 | Ծրագրեր և կատարողական

3.1.1 | Ծրագրեր և կատարողական /հարկային ծառայության մասով/

Շարունակվել են աշխատանքները հարկային վարչարարության բնագավառում հետևողական միջոցառումների իրականացման ուղղությամբ: Մասնավորապես աշխատանքներ են տարվել հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացման ուղղությամբ: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.12.10թ. թիվ 2452-Ա հրամանով ՀՏ-ներին հանձնարարվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված սպասարկման աշխատանքների որակի ամրապնդմանը. սահմանվել են ընթացակարգերի ճշգրիտ իրականացման նկատմամբ խիստ հսկողություն և հանձնարարվել է ՀՏ-ների կողմից նախաձեռնել մի շարք միջոցառումներ՝ հարկ վճարողների իրազեկման, ինչպես նաև հարկային ծառա-

յողների կարգապահության ամրապնդման ուղղությամբ: Հրամանով հաստատվել են նաև հարկ վճարողների սպասարկման բարելավման ուղիները, որոնք են.

- պաշտոնական ինտերնետային կայքեր,
 - հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ,
 - թեժ գիծ,
 - պարզաբանումներ, հրապարակումներ,
 - հաճախ տրվող հարցերի շտեմարան,
 - սպասարկման կենտրոններ և այլն:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.12.10թ. թիվ 2981-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից իրականացվող հարկ վճարողների իրազեկման միջոցառումների կազմակերպման ընթացակարգը: Սահմանված ըն-

թացակարգին համաձայն՝ իրազեկումը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի գործառնություններից մեկն է և նպատակ ունի աջակցել հարկ վճարողների հարկային, մաքսային և հարակից օրենսդրության, ինչպես նաև հարկային և մաքսային վարչարարության պահանջների կատարմանը և օրենսդրական փոփոխություններին

տեղեկանալուն, հարկերն ինքնուրույն հաշվարկելուն և վճարելուն: Ընթացակարգով նախատեսվում է, որ յուրաքանչյուր տարվա համար մշակվելու է առանձին իրազեկման միջոցառումների ծրագիր, որտեղ սահմանվելու են տվյալ տարվա ընթացքում կատարման ենթակա իրազեկման միջոցառումներ:

3.1.2 | Ծրագրեր և կատարողական /մաքսային ծառայության մասով/

Սույն թվականի դեկտեմբերի 8-9-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմինը մասնակցել է ք. Երևանում կազմակերպված Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագրի շրջանակներում

«Սահմանների համալիր կառավարման լավագույն փորձ, միջոցառումների ծրագրի մշակում, իրականացում և դրա ընթացքի դիտարկում» թեմայով ազգային աշխատաժողովին:

3.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

3.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.11.2010թ-ից մինչև 20.12.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել են թվով 3 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 18 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.11.2010թ-ից մինչև 20.12.2010թ-ն ընկած ժամանակահատվածում լսվել է թվով 25 բողոք, որից.

- բավարարվել է 4 բողոք,
- բավարարվել է մասնակի 1 բողոք
- կարճվել է 2 բողոք
- մերժվել է 18 բողոք

3.3 | Միջազգային համագործակցություն

2010 թվականի հոկտեմբերին կազմակերպվել է Վրաստանի ֆինանսների նախարարի և եկամուտների ծառայության ղեկավարի այցը Երևան, որի ընթացքում քննարկվել են հայ-վրացական սահմանային համագործակցության մի շարք խնդիրներ:

2010 թվականի դեկտեմբերին կազմակերպվել է Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության ղեկավարի այցը Հայաստան, որի ընթացքում քննարկվել են հայ-իրանական սահմանային համագործակցության մի շարք խնդիրներ: Բանակցությունների փուլում են գտնվում ՀՀ

կառավարության և Վրաստանի կառավարության միջև մաքսային անցակետերի համատեղ օգտագործման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի, ինչպես նաև համապատասխան համաձայնագրի նախագծերը:

Սահմանների համալիր կառավարման նպատակով ստեղծվել են 3 աշխատանքային խմբեր՝ բաղկացած ՀՀ և Վրաստանի մաքսային մարմինների ներկայացուցիչներից, հետևյալ ուղղություններով՝ օրենսդրություն, ենթակառուցվածքներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ:

3.4 | Զարկային և մաքսային թվերի համառոտագիր

3.4.1 | Զարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2010 թվական		
		Նույններ	հունվար-նոյեմբեր	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-նոյեմբեր)%
2	3	4	5	
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ	1,324.0	13,743.0	94.1
2	Զարկային մարմնի կողմից պետքույն չէ հավաքագրված եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	35,710.4	402,272.3	112.3
2.1	ԱԱՀ	9,457.3	100,513.9	132.2
2.2	Շահութահարկ	6,030.5	70,892.3	94.4
2.3	Ակցիզային հարկ	503.6	6,121.8	113.7
2.4	Եկամտահարկ	6,433.3	67,174.9	126.9
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	7,214.3	98,484.6	106.5
2.6	Այլ	6,071.5	59,919.3	106.7
3	Զարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	3,545.0	27,533.0	99.3
4	Զարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	1,854.7	25,316.7	93.7

3.4.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		Հունվար-նոյեմբեր	նոյեմբեր	հունվար-նոյեմբեր	նոյեմբեր	հունվար-նոյեմբեր	նոյեմբեր
2	3	4	5	6	7	8	
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	205 015	24 336	237 294	22 305	115.7	91.7
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	1 333 345	172 196	1 595 663	159 383	119.7	92.6
2.1	Արտահանում (մլն դրամ)	254 209	28 099	337 571	37 951	132.8	135.1
2.2	Ներմուծում (մլն դրամ)	1 079 136	144 097	1 258 092	121 432	116.6	84.3
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	21 380	3 595	24 564	4 387	114.9	122

ևս մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



եռամսյա պարբերականությամբ
հրատարակվում են
«Հարկատու» և «Մաքսատուն»
ամսագրերը